

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Սոյն թուականի նոյեմբերի 13-ին, կիրակի օրը, Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Վազգէն Ա Վեհափառ Հայրապետը, Էջմիածնի Մայր Տաճարում, խարտաւիլակութեամբ Մայր Աթոռի դիւանապետ Տ. Ներսէս արք. Պոզապալեանի և արարողութեամբը Մայր Տաճարի լուսարարապետ Տ. Յուսիկ արք. Սանթուրեանի, սրբալոյս միւռոնի օծմամբ եպիսկոպոս ձեռնադրեց Սուրբ Էջմիածնի Մայր Աթոռի և Երուսաղէմի Հայոց Սրբոց Յակոբեանց վանքի միաբան վեց վարդապետների՝ համաձայն կարգաց և կանոնաց Հայաստանեայց Առաքելական սուրբ Եկեղեցու:

Ձեռնադրուած հոգևորականներն են՝

1. **Տ. Վաղարշ եպիսկոպոս Խաչատուրեան**, ծնեալ 1941 թ. Հալէպ քաղաքում:

2. **Տ. Վահան եպիսկոպոս Թօփալեան**, ծնեալ 1941 թ. Պէյրութ քաղաքում:

3. **Տ. Սեւան եպիսկոպոս Ղարիպեան**, ծնեալ 1940 թ. Պէյրութ քաղաքում:

Վերոյիշեալ երեք եպիսկոպոսները ձեռնադրուեցին Երուսաղէմի հայոց Սուրբ Աթոռի վրայ, համաձայն Սրբոց Յակոբեանց միաբանութեան ընդհանուր ժողովի 12-րդ նիստի որոշման:

4. **Տ. Տիրան եպիսկոպոս Կիւրեղեան՝** ձեռնադրուած Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմի վրայ իբրև թեմակալ առաջնորդ, ծնեալ 1948 թ. Նիկոսիա (Կիպրոս) քաղաքում:

5. **Տ. Ասողիկ եպիսկոպոս Արիստակեսեան՝** ձեռնադրուած Սիւնեաց թեմի վրայ իբրև առաջնորդ, ծնեալ 1959 թ. Հայթաղ գիւղում (Էջմիածնի շրջան):

6. **Տ. Պարգեւ եպիսկոպոս Մարաիրոսեան**, ձեռնադրուած իբրև վանահայր Ս. Հռիփսիմէ վանքի, ծնեալ 1954 թ. Սումգայիթ քաղաքում (Ադրբ. ՍՍՀ):

Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողքին ընթերակայ եպիսկոպոսներ էին՝ Շիրակի թեմի առաջնորդ Տ. Նարեկ եպս. Շաքարյանը և Ադրբ. թեմի հայոց առաջնորդ Տ. Անանիա եպս. Արապաճեանը:

Պատշաճ հանդիսաւորութեամբ տեղի ունեցած արբազան արարողութիւններին ներկայ էին Երուսաղէմի հայոց Ամենապատիւ Պատրիարք Տ. Եղիշէ արք. Տէրտէրեանը, Գերագոյն Հոգևոր Խորհրդի ատենապետ Տ. Սիոն արք. Մանուկեանը և Խորհրդի անդամները, հայրենի գիտնականներ, գրողներ, արուեստագէտներ, ուխտաւորաբար Մայր Աթոռ ժամանած ապիւրքահայ ծանօթ մտաւորականներ և հաւատացեալ ժողովրդի հոծ բազմութիւն:

Ջեռնադրութեան արարողութեանը ներկայ էր նաև Հայաստանի Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Տիար Ստեփան Վարդանեանը:

Նոյեմբերի 14-ին, երկուշաբթի օրը, նորապսակ եպիսկոպոսները իրենց ուխտի պատարագը մատուցեցին Էջմիածնի Մայր Տաճարում, Ս. Հռիփսիմէ վանքում և Երևանի Ս. Սարգիս ու Ս. Յովհաննէս եկեղեցիներում:

«Լցո Տէր զսոսա, հոգւովդ Քով սրբով, զօրացո և յաջողեա սոցա օգնականութեամբ Քով յամենայն գործս բարիս». ամէն:

ԴԻՒԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

Սուրբ Էջմիածին,
16 Նոյեմբերի 1988 թ.